Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1524 - Լ որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար միջավայրի մատչելիության ապահովում՝ ֆիզիկական, տեղեկատվական ու հաղորդակցական խոչընդոտների վերացման միջոցով			
1)	«Շենքերի և շինությունների մատչելիություն և անձնագրավորում» (տեխնիկական վիճակի հետազննություն, անձնագրերի կազմում)	Քաղաքաշինության կոմիտե Պետական կառավարման ոլորտային մարմիններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջեի միջոցներ՝ ըստ հաստատված ծրագրի (87,000.0 հազ. դրամ)	Հասարակական նշանակության շենքերի մատչելիությանը և անձնագրավորմանն ուղղված միջոցառումների կատարում Երևան քաղաքում, շենքերի և շինությունների անձնագրերի կազմում (շարունակական)
2.	Հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց՝ որակյալ ներառական կրթության իրավունքի ապահովում կրթության բոլոր մակարդակներում			

1)	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար սեմինարների, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե (20,834.2 հազ. դրամ)	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 20%-ի վերապատրաստում, այդ թվում՝ նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման անձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանության հարցերի շուրջ
2)	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (127,654.2 հազ. դրամ)	Հանրակրթական դպրոցների շուրջ 2000 ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում
3.	Մշակութային իրավունքների խթանում և ապահովում, մասնակցություն սպորտին և ժամանցին			

1)	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում մարզերում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (5,574.0 հազ. դրամ)	ՀՀ 10 մարզերում շուրջ 650 տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում՝ տնային պայմաններում
2)	Բրայլյան տառատեսակով գրքերի, ամսագրերի հրատարակում, տետրերի պատրաստում, աուդիոգրքերի ձայնագրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Հայաստանի կույրերի միավորման հրատարակչություն» ՍՊԸ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե (9,786.6 հազ. դրամ)	Տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայլյան տառատեսակով գրքերի և տետրերի տպագրության, «Խոսող գրքերի»՝ աուդիոգրքերի ձայնագրության ծառայությունների ապահովում

3)	Արտադպրոցական դաստիարակության ծրագրի իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (83,000.0 հազ. դրամ)	Ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքների և հաշմանդամություն ունեցող շուրջ 609 երեխաների համար արվեստի և արհեստների անվճար ուսուցում
4)	Ներառական նախագծերի նպատակային աջակցություն ժամանակակից արվեստի ոլորտում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (53,000.0 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու խթանմանն ուղղված հնարավորությունների ստեղծում, ինչպես նաև մշակույթի միջոցով նրանց ինտեգրման ապահովում հասարակություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակեր-

				պությունների 5 ստեղ-ծագործական ծրագրերի նպատակային աջակցմամբ
5)	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (121,685.0 հազ. դրամ)	Մարզական զանգվածային միջոցառումների, ՀՀ առաջնու-թյունների անցկացում միջազ-գային մրցաշարերին հաշման-դամություն ունեցող մարզիկ-ների նախապատրաստում և մասնակցության ապահովում
4.	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն և անկախ կյանքին աջակցող ծառայությունների ապահովում			
1)	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (670,565.9 հազ. դրամ)	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այդ թվում՝ հաշման-դամություն ունեցող) 600 երե-խայի ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում և նրանց ընտանիքներին սոցիալ-

				հոգեբանական աջակցության տրամադրում
2)	Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե (506,016.4 հազ. դրամ)	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3500 երեխայի ցերեկա-յին խնամքի ծառայությունների մատուցում և նրանց ընտանիք-ներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում
3)	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե (201,443.7 հազ. դրամ)	410 շահառուի սոցիալ-հոգեբանա-կան աջակցության տրամադրում ցերեկային կենտրոնում

4)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ՝ համայնքահենք փոքր խմբային տներում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե (81,597.9 հազ. դրամ)	62 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում
5)	Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (11,561.6 հազ. դրամ)	Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) 28 անձի սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում
6)	Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (1,924,342.6 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 18641 աջակցող միջոցների տրամադրում
7)	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (3,152,380.7 հազ. դրամ)	1205 անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում, որից՝ 880-ը 18

				տարեկանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձինք են
8)	Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (230,817.3 հազ. դրամ)	1250 անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում, որից՝ շուրջ 600-ը հաշմանդամություն ունեցող անձինք են
9)	Ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե (155,915.3 հազ. դրամ)	1200 անձի սոցիալական սպա-սարկում ցերեկային կենտրոն-ներում, որից՝ շուրջ 600-ը 18 տարեկանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձինք են

10)	Զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում	ՀՀ պաշտպանության նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ	ՀՀ պետական բյուջե (494,000.0 հազ. դրամ)	Զոհված զինհաշմանդամների ընտանիքների բնակկենցաղային պայմանների բարելավում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ